ԿԱՐԵՆ ՓԱՎԼԵՄԱՆՅԱՆ

ՀԱՅ ՋԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՐԵՒԵԼԱՊՐՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆԸ

ԺԹ դարի վերջին եւ Ի դարի սկզբին աշխարհում գոյություն ունեցող միջազգային լարված իրավիճակը մի քանի փոքր ու միջին պատերազմներով չլիցքաթափվեց, ինչի հետեւանքով 1914 թվականին սկսվեց մի նոր պատերազմ, որը իր ծավալներով աննախադեպ էր մինչ այդ մարդկությանը հայտնի բոլոր պատերազմներից: Այն շատ կարճ ժամանակ անց որակվեց որպես համաշխարհային պատերազմ: Հակամարտության գլխավոր նախաձեռնողը՝ Գերմանիան, պատերազմի առաջին իսկ օրերից սկսած Եւրոպայի արեւմտյան հատվածում ցարական Ռուսաստանի դաշնակից Ֆրանսիայի նկատմամբ մեծ առավելություն ձեռք բերեց: Ծանր իրավիճակում հայտնված Ֆրանսիայի եւ Ռուսաստանի մյուս դաշնակիցների ամենօրյա հորդորները, ինչպես նաեւ արեւմուտքում իր դաշնակիցների ջախջախման իրական վտանգը՝ ստիպեցին Ռուսաստանին, որպեսզի վերջինս Եւրոպայի արեւելյան հատվածում սկսի ռազմական գործողություններ: Միանգամից բացված երկու ճակատները միասին հայտնի են Ռուսական (Արեւելյան) ռազմաճակատ անվանումով, որն ընդգրկում էր ռուսական կայսրության ողջ արեւմտյան սահմանային շրջանը, Պրուսիայի արեւելյան տարածքը, Պոզնան եւ Սիլեզիա նահանգները, ինչպես նաեւ Գալիցիայի տարածքը: Ռուսական ռազմաճակատի լայնակի ձգվածությունը հասնում էր 1400 կմ-ի, որի հյուսիսարեւմտյան հատվածում Գերմանիան կուտակել էր մեծ քանակությամբ նյութատեխնիկական եւ ռազմական միջոցներ (պատերազմի սկզբին 200 հազար կենդանի զինուժ, 774 հրանոթ եւ այլն)[1]:

Ռուսական ռազմաճակատի հյուսիսարեւմտյան հատվածում ռազմական գործողությունների սկիզբը ազդարարվեց օգոստոսի 4 (17)-ին Արեւելապրուսական ռազմական գործողությամբ: Այս ճակատում ռուսական զինուժի Գլխավոր հրամանատարության նախաձեռնած հարձակումը, իր դաշնակցային պարտավորությունները կատարելուց բացի, նպատակ էր հետապնդում նաեւ շրջապատելու գերմանական խմբավորումները եւ տիրելու արեւելյան Պրուսիայի տարածքները: Այս նպատակին հասնելու համար ռուսական Ռազմակայանը Գերմանիայի դեմ Ռուսական ռազմաճակատի հյուսիսարեւմտյան հատվածում կենտրոնացրեց ռուսական 1-ին եւ 2-րդ բանակները (1-ին բանակը ուներ 6,5 հետեւակային եւ 5,5 հեծելազորային դիվիզիաներ, 402 հրանոթ եւ ղեկավարվում էր գեներալ Պ.Կ.Ռեննենկամպֆի կողմից[2]: 2-րդ բանակը ուներ 12,5 հետեւակային եւ 3 հեծելազորային դիվիզիա, 702 հրանոթ եւ ղեկավարվում էր գեներալ

1 Տե՛ս **Д. В. Вержховский- В. Ф. Ляхов**, Первая мировая война 1914-1918гг., Москва, 1964, էջ 65:

2 Տե՛ս **К. А. Залесский**, Первая мировая война, Биографический Энциклопедический словарь, Правители и Военачальники, Москва, 2000, ïջ 191:

Ա.Վ.Սամսոնովի կողմից[3]): Ընդհանուր առմամբ պատերազմի սկզբին Ռուսաստանն այս թատերաբեմում կենտրոնացրել էր թվով 250 հազար զինվորականություն, սակայն բոլորն էլ գիտակցում էին, որ ռազմական գործողությունների ելքը որոշելու էր ոչ թե կենդանի ուժի թվաքանակը այլ դիվիզիաների մարտունակությունը եւ տեղաբաշխվածությունը:

Պատերազմի հայտարարման հենց առաջին օրերից Ռուսական ռազմաճակատ տեղափոխվեցին նաեւ մեծ թվով հայ զինվորականներ, որոնցից շատերն իրենց անբասիր եւ օրինակելի ծառայությամբ աչքի ընկան տարբեր իրավիճակներում[4]:

1914թ. օգոստոսի 4 (17)-ին ռուսական 1-ին բանակը, հատելով պետական սահմանը, անցավ լայն հարձակման եւ անմիջականորեն տեղակայվեց արեւելյան Պրուսիայի տարածքում: Ստալուպյոնենի մերձակայքում տեղի ունեցավ ռուսական եւ գերմանական կողմերի առաջին խոշոր ընդհարումը, որի ժամանակ ռուսական 1-ին բանակը թեեւ չկարողացավ վերջնականորեն կոտրել թշնամու դիմադրությունը, սակայն ունեցավ շոշափելի հաջողություններ: Գերմանական առանձին զորամասեր սկզբում զգալի կորուստներ տալով նահանջեցին Անգերապ գետի ավազան, այնուհետեւ Գումբիննենից հյուսիս ընկած տարածքներ: Ռուսական հրամանատարությունն իր հերթին թերացավ եւ չհետապնդեց նահանջող եւ մարտունակությունը կորցրած թշնամուն:

1914թ. օգոստոսի 7 (20)-ին Գումբիննենի շրջանում բռնկվեց համաշխարհային պատերազմի ամենահոշոտ ճակատամարտերից մեկը, որտեղ սկզբում գերմանացիները հաջողություն ունեին, սակայն ռուսական զորքի հակահարձակման արդյունքում գերմանացիները նահանջեցին դեպի Գոլդապի շրջան՝ տալով 8 հազար զոհ, 1000 գերի եւ կորցնելով 12 հրանոթ[5]:

Այս մարտերում իր քաջագործություններով աչքի ընկավ նորբայազետցի Տիգրան

---

3 Տե՛ս անդ, էջ 198:

4 Առաջին աշխարհամարտի Ռուսական ռազմաճակատում հայազգի զինվորների մարտական առօրյայի լուսաբանման համար կարեւոր աղբյուրագիտական հիմք են հանդիսանում հայազգի մի շարք հոգեւորականների առանձին հրապարակումներ, որոնք տպագրվել են պատերազմի տարիներին:

Պատերազմի սկսվելուն պես բանակային շտաբներում ստեղծվել էին հատուկ պաշտոններ հոգեւորականների համար, որոնց կարեւոր խնդիրներից մեկն էր բանակում զինվորականության շրջանում պատերազմի նպատակների լուսաբանումը, նրա արդարացիության քարոզումը, զինվորականության բարձր մարտական ոգու ապահովումը: Նրանք լինում էին եղիրքերում, եւ՛հիվանդանոցներում, եւ՛շտաբում, եւ՛զինվորական գերատեսչական գրեթե բոլոր օղակներում ("Вопросы Истории", N10, октябрь 1990г., 162, **А. С. Сенин**, Армейское духовенство России в первую мировую войну): Հայազգի զինվորականության կողմից հոգեւորականներին ուղղված նամակները, հայ զինվորականության հետ հոգեւորականների պարբերաբար զրույցները, ժամանակ առ ժամանակ տարբեր հոսպիտալներ կատարված այցերը հայ հոգեւորականներին հնարավորություն էին ընձեռում հավաքել մի շարք արժեքավոր փվյալներ եւ դրանք զետեղել հայալեզու մամուլում: Խոսքը հատկապես վերաբերում է 1914-1918թթ. Թիֆլիսում տպագրվող «Մշակ» թերթին, որը Կյուրեղ ս. Աբգարյանի, Արսեն ք. Սիմոնյանի, Խորեն ք. Մնացականյանի շնորհիվ ի ցույց էր դնում հայազգի զինվորականների կատարած քաջագործություններն ու սխրանքները, Գեորգիեւյան շքանշանի հայազգի ասպետներից ոմանց անցած մարտական ուղին, վիրավորների եւ զոհերի անունները:

Առաջին աշխարհամարտի ժամանակ բանակային հոգեւորականության ներդրած մեծ ավանդի համար նրանցից շատերը արժանացել են բազմաթիվ բարձր պարեւների՝ այդ թվում եւ հայազգի հոգեւորականներից: Նրանց կատարած աշխատանքը բարձր է գնահատել նաեւ ռուսական կայսրության Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաեւիչը. «Անհրաժեշտ է որմենք խոնարհվենք բանակային հոգեւորականության ուրքերի առջեւ այն օգնության համար, ինչը ցուցաբերվում է նրանց կողմից դժվար պատերազմի օրերին» ("Вопросы Истории", N10, 164, **А. С. Сенин,** Армейское духовенство России в первую мировую войну):

5 Տե՛ս "Стратегический очерк войны 1914-1918гг.", ч.1, Москва, 1920, էջ 75:

Բադալի Զարգարյանը[6], որը ռուսական մի զորամիավորման կազմում պետական սահմանն անցել էր օգոստոսի 5 (18)-ին Սուվալկի նահանգի Ավգուստով քաղաքի շրջանում: Օգոստոսի 7 (20)-ին՝ ժամը 10-ին, Նեռիխա բնակավայրի մոտ ռուսական զորամիավորումը հանդիպելով գերմանական զորքին, 1 ժամ տևողությամբ թեժ մարտի բռնվեց: Մարտի ավարտից հետո, երբ գերմանացիների ձեռքում գտնվող քաղաքի կայարանում գնացքների շարժում նկատվեց, ռուսական հրետանին ակտիվ կրակ բաց արեց: Սակայն գրոհի հաջողության եւ արդյունավետ լինելու համար անհրաժեշտ էր պարզել թշնամու իրական ուժը եւ տեղաբաշխվածությունը: Նշված մարտական առաջադրանքը իրականացնելու համար պատրաստականություն հայտնեց Տիգրան Զարգարյանը: Միայնակ գնալով քաղաք՝ կայարանում նա տեսավ, որ թշնամին որոշել է փախուստի դիմել գնացքներով: Զարգարյանը, կայարանում ոչնչացնելով 12 հեռագրական եւ 8 հեռախոսային սարքեր, կտրելով բազմաթիվ լարեր, թշնամուն զրկում է կապի միջոցներից եւ ամբողջովին մեկուսացնում է իր պահեստային ուժերից:

Պարզելով իրավիճակն ու գերմանացիների իրական կարողությունները՝ հայազգի զորայինը ռուսական հրետանու արձակած արկերի պայթյունների միջով վերադարձավ եւ թշնամու տեղաբաշխվածության, քաղաքում տիրող իրավիճակի մասին զեկուցեց հրամանատարությանը: Այս մարտական առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար ենթասպա Զարգարյանն արժանացավ Ս.Գեորգիեյան խաչի 4-րդ աստիճանի շքանշանի[7]:

Գումբինենի տարածաշրջանում ծավալված մարտական գործողությունների ընթացքում ռուսական զինուժի կորուստները, ի տարբերություն գերմանական զինված ուժերի կորուստների, ավելի քիչ էին: Վերագայում, 1930 թվականին Չերչիլը գրեց. «Քչերն են լսել Գումբինենի մասին եւ գրեթե ոչ ոք ըստ արժանավույն չի գնահատել այն հիանալի դերը, որ խաղաց այդ հաղթանակը: Ռուսական 3-րդ կորպուսի հակահարձակումները եւ Մակենզենի կրած ծանր պարտությունները խուճապ առաջացրեցին 8-րդ բանակում»[8]:

Օգոստոսի 7 (20)-ին սահմանն անցավ նաեւ ռուսական 2-րդ բանակը եւ իրական նախահիմքեր ստեղծեց գերմանական 8-րդ բանակի շրջապատման համար: Սակայն ստեղծված բարենպաստ իրավիճակը չօգտագործվեց ռուսական 1-ին բանակի հրամանատարության կողմից, որի անգործությունը հնարավորություն տվեց գերմանական հրամանատարությանը օգոստոսի 8 (21)-ին փոխելու իր սկզբնական ծրագրերը: Փոխարեն Վիսլա գետն անցնելու՝ գերմանական ուժերը խմբավորվեցին Ալլենշտեյնի շրջանում եւ էլ ավելի՝ հարավ-արեւմտյան ուղղությամբ, նպատակ հետապնդելով հարվածելու ռուսական 2-րդ բանակի ձախ թեւին:

Առաջնորդվելով սխալ ենթադրություններով՝ ռուսական 1-ին բանակը շրջապատեց Քյոնիգսբերգը, որի պատճառով ռուսական 2-րդ բանակը արեւելյան Պրուսիայում գերմանական զինուժի դեմ թողնվեց մեն-մենակ:

Ռուսական 2-րդ բանակի սկսած հարձակման կենտրոնում գործում էր հատուկ

6 Տե՛ս "Стратегический очерк войны 1914-1918гг.", ч.1, Москва, 1920, էջ 75:
7 Տե՛ս «Մշակ», թ. 65, 31 մարտի 1915, էջ 3:
8 **В. Е. Шамбаров,** За веру, царя и отечество!, Москва, 2003, стр.157.

հարվածային խումբ, որի կազմում էր նաև Նովոգեորգիեւսկից մոտեցած 3-րդ գվարդիական դիվիզիան՝ լեյբ-գվարդիական Վոլինյան, Լիտովյան, Գրենադերական, Սանկտ-պետերբուրգյան գնդերից բաղկացած[9]:

Լեյբ-գվարդիական Գրենադերական գնդի հետ է կապված հայազգի Լազարյան գերդաստանի ներկայացուցչի՝ փոխգնդապետ Միխայիլ Լազարեի անունը, որն աշխարհամարտն սկսվելուն պես իր զորամիավորումով տեղափոխվեց Դյուսիսարեւմտյան ճակատ եւ 3-րդ գվարդիական դիվիզիայի կազմում մասնակցեց ծավալված մարտական գործողություններին: Հետագայում փոխգնդապետ Միխայիլ Լազարեւը աչքի ընկավ նաեւ մի շարք այլ ռազմական գործողությունների ժամանակ պարգեւատրվեց մի շարք պատվավոր շքանշաններով եւ պարգեւներով, իսկ 1916թ. ապրիլի 10-ին նրան շնորհվեց գնդապետի զինվորական աստիճան[10]:

Ըստ ռուսական Գլխավոր հրամանատարության մշակած ծրագրի՝ Բիշոֆսբուրգի շրջանում զորքի աջ թեւը ապահովելու էին 6-րդ բանակային կորպուսը եւ 4-րդ հեծելազորային դիվիզիան, իսկ ձախ թեւը՝ Սոլդաուի շրջանում պետք է ապահովեին 2-րդ բանակային կորպուսը, 6-րդ եւ 15-րդ հեծելազորային դիվիզիաները:

15-րդ հեծելազորային դիվիզիայի 15-րդ դրագունյան Պերեյասլավ գնդի[10] կազմում փոխգնդապետի կոչումով ծառայում էր հայազգի Սերգեյ Մարտինի Աթաբեկովը, որը Արեւելապրուսական եւ պատերազմի մյուս ռազմական գործողություններում ցուցաբերած առանձնահատուկ քաջության համար արժանացել է բազմաթիվ բարձրաստիճան պարգեւների, իսկ 1915թ. նոյեմբերի 19-ին նրան շնորհվել է գնդապետի կոչում[11]:

Ռուսական հրամանատարության կանխատեսումները չհամապատասխանեցին օպերացիայի իրական ընթացքին, որովհետեւ բոլոր ծրագրերը կառուցվել էին այն թյուր ենթադրության հիման վրա, որ իբր գերմանական ջախջախվելիք զորքերի մնացորդները պետք է նահանջեին Քյոնիգսբերգ, մի մասն էլ դեպի Վիսլա գետը: Արդյունքում ռուսական զինուժը մեծ կորուստներ ունեցավ:

Ի տարբերություն ռուսական հրամանատարության գործողությունների՝ գերմանական Գլխավոր շտաբը ուշադիր հետեւում էր իրավիճակին, ինչպես նաեւ ռուսների՝ բաց տեքստով օպերատիվ ռադիոհաղորդումներին: Համոզվելով ռուսական 1-ին բանակի ապակողմնորոշվածության եւ դանդաղկոտության մեջ՝ գերմանական հրամանատարությունը փոխեց իր սկզբնական ծրագրերը եւ որոշեց զորաշարժել ռուսական 2-րդ բանակի դեմ:

Օգոստոսի 13 (26)-ին եւ 14 (27)-ին ծավալված մարտական գործողությունների ընթացքում ռուսական 2-րդ բանակի վիճակը ծանրացավ, եւ ռուսական զինուժի կենտրոնում գտնվող 13-րդ եւ 15-րդ կորպուսների թեւերը բացվեցին: Այդուհանդերձ, ռուսական զորքը կարողացավ մարտերով խափանել թշնամու՝ շրջապատման ծրագրերը, որի կապակցությամբ ուշ գիշերով գերմանական հրամանատար Հինդենբուրգը գլխավոր

9 Տես **К. А. Залесский**, Первая мировая война, Биографический Энциклопедический словарь, Правители и Военачальники, էջ 484:

10 Տես **К. А. Залесский**, Первая мировая война, Биографический Энциклопедический словарь, Правители и Военачальники, էջ 520:

11 Տես "Список полковникамъ по старшинству", էջ 388:

հրամանատարությանը զեկուցեց, որ ռուսական երկու կորպուսների շրջապատումը հավանաբար այլևս չի հաջողվի[12]:

1. Օգոստոսի 16 (29)-ի առավոտյան գերմանական զինված ուժերը կրկին անցան հարձակման և փիրեցին ռուսական 2-րդ բանակի 2 թևերին միաժամանակ: Ճակատագրի, թե պատահականության բերումով գերմանական 17-րդ կորպուսը հայտնվել էր ռուսական զորքերի նահանջի ճանապարհին և հենց նա էլ ռուսական 13-րդ և 15-րդ կորպուսների և 23-րդ կորպուսի 2-րդ հեծելակային դիվիզիայի շուրջ շրջափակման օղակը փակեց: Շրջապատման մեջ ընկավ ռուսական շուրջ 30 հազար զինվոր և սպա՝ 200 հրանոթով: Մազուրյան լճերի տարածքում ռուսական 2-րդ բանակին պատահած աղետի լուրը սփռվեց Եվրոպայով մեկ: Ռուսական հրամանատարությունը և Նիկոլայ II-ը խորը հուսահատություն ապրեցին[13]:

Գերմանական հրամանատարությունը, հիմնականում ավարտված համարելով ռուսական 2-րդ բանակի դեմ իր գործողությունները, սկսեց ուժերը կենտրոնացնել ռուսական 1-ին բանակի դեմ և «Գերմանական 8-րդ բանակի առաջնային խնդիրը դարձավ արևելյան Պրուսիայի մաքրագործումը Ռեննենկամպֆի բանակից»[14]:

1914թ. օգոստոսի 22 (սեպտեմբերի 4)-ին արևելյան Պրուսիայի տարածքում ռուսական 1-ին բանակի, 2-րդ բանակի փրկված մասի և գերմանական 8-րդ բանակի միջև բռնկվեցին թեժ մարտական գործողություններ: Օգոստոսի 22 (սեպտեմբերի 4)-ից օգոստոսի 27 (սեպտեմբերի 9)-ը Մազուրյան լճերի տարածքում մարտնչող բազմահազար զինվորականության մեջ կրկին առանձնացավ հայազգի ունտեր-օֆիցեր (ենթասպա) Տիգրան Զարգարյանը: Օգոստոսի 27 (սեպտեմբերի 9)-ին՝ երեկոյան ժամը 8-ին կոիվը այդ շրջանում ծայր ստացավ, և անհրաժեշտությունից ելնելով՝ ռուսական զինուժը նահանջելու մասին հրաման ստացավ: Զարգարյանին հրամայվեց ապահովել ռուսական զինուժի անկորուստ նահանջը: Մարտական առաջադրանքը կատարելու համար Տ. Զարգարյանն իր ջոկատով շարժվեց դեպի մոտակա խճուղի՝ գերմանացիների հավանական հարձակման ուղղությամբ: Դիրքավորվելուց անմիջապես հետո սկսվեց գերմանացիների հարձակումը, որն ստրիճանաբար վերածվեց փոխհրաձգության, այնուհետև պաշտպանական մարտերի, իսկ փոքր ինչ ուշ՝ հակառակորդի անկանոն փախուստի: Տիգրան Զարգարյանի խումբը, հաջողությամբ կատարելով մարտական առաջադրանքը, ապահովեց ռուսական զորքի անկորուստ նահանջը դեպի Գոլդապի շրջան: Օգոստոսի 29 (սեպտեմբերի 11)-ին, Գոլդապի շրջանում ռուսական զինուժը կրկին կանգնեց կործանման վտանգի առջև: Այս անգամ Զարգարյանն ուղարկվեց հարեւանությամբ գտնվող ռուսական գունդ՝ օգնություն խնդրելու: Ճիշտ ժամանակին վրա հասած օգնությունից գերմանացիները անակնկալի եկան և մեծ կորուստներ տալով նահանջեցին, սակայն օգոստոսի 30 (սեպտեմբերի 12)-ին, այս անգամ արդեն հեծելազորի աջակցությամբ, վերսկսեցին հարձակումը: Տիգրան Զարգարյանն իր խմբով

12 Տե՛ս "Der Weltkrieg 1914 bis 1918. Bd. 2", Berlin-1925, էջ 206:

13 Երբ Նիկոլայ II-ը հեռագիր է ստանում Մազուրյան լճերի մոտ Սամսոնովի ոչնչացման մասին, հայազգի հերոս Անդրանիկը հատուկ դիմումով անմիջապես ռազմաճակատի այդ հատված մեկնելու պատրաստակամություն է հայտնում: Տե՛ս **Սեպուհ**, Էջեր իմ Յուշերէն, Պոսթըն, 1925, էջ 58:

14 Տե՛ս "Der Weltkrieg 1914 bis 1918. Bd. 2", էջ 268:

թշնամու հեծելազորը մոտ թողնելով մինչեւ 500 քայլ, ուժեղ կրակ բաց արեց եւ թշնամուն մեծ կորուստներ պատճառելով դարձյալ փախուստի մատնեց: Այդ գործողությունների համար Զարգարյանն արժանացավ Ս. Գեորգիի խաչի 3-րդ աստիճանի, իսկ օգոստոսի 31 (սեպտեմբերի 13)-ին կատարած հետախուզությունների, թշնամական լրտեսների հայտնաբերման, գերմանացիների գտնվելու վայրը պարզելու համար նա արժանացավ Ս.Գեորգիի շքանշանի 4-րդ աստիճանի՝«Քաջության համար» մակագրությամբ[15]:

1914 թվականի օգոստոսի 29 (սեպտեմբերի 11)-ին Ինստենբուրգի մոտ ռուսական 1-ին բանակի եւ գերմանական 8-րդ բանակի միջեւ բռնկված մարտերը նույնպես առանձնացան իրենց ծավալով եւ լարվածությամբ: Այստեղ եւս ռուսական զինվորականության հետ կողք-կողքի մարտնչեցին բազմաթիվ հայեր՝ աչքի ընկնելով արիությամբ եւ նվիրվածությամբ:

Մյուս զորականը, որն աչքի ընկավ մեծ խիզախությամբ, հիենախիջեւանցի շարքային Ենովք Պողոսյանցն էր: Նա ինստենբուրգյան մարտերի ընթացքում ցուցաբերեց իսկական հերոսության օրինակներ, ինչի համար արժանացավ Ս. Գեորգիի շքանշանի[16]:

Նույն օրը, գիշերվա ժամը 1-ին Ինստենբուրգի մոտ գերմանացիները, ապակողմնորոշելով ռուսական զորքին, անցան հարձակման: Ծավալված փոխհրաձգությունը սկզբում նպաստավոր էր գերմանացիների համար, քանի որ նրանք այրել էին ռուսական զորքի թիկունքում գտնվող հարդի դաշտը եւ այդպիսի լուսավորության պայմաններում խավարից կարողանում էին ճիշտ կողմնորոշվել եւ ավելի դիպուկ լինել: Իսկ երբ ռուսները անցան հակահարձակման՝ բանը հասցնելով ընդհուպ սվինամարտի, գերմանացիները դիմեցին փախուստի, իսկ առանձին խմբեր զենքերը վայր դնելով՝ գերի հանձնվեցին: Եւ քանի որ ռուսական զինուժի գրոհը շարունակվում էր, եղան դեպքեր, երբ գերի հանձնված գերմանական խմբերի միջից ռուս զինվորների ուղղությամբ նռնակներ նետվեցին: Այդպիսի պայթյուններից մեկի ժամանակ ծանր վիրավորվեցին ռուսական վաշտերից մեկի հրամանատարը եւ նրա օգնականը: Նույն վաշտի կազմում էր նաեւ Ենովք Պողոսյանցը, որը կարողանում է ճիշտ ժամանակին փոխհրաձգություն սկսել եւ վիրավոր հրամանատարին, իսկ այնուհետեւ նաեւ հրամանատարի օգնականին դուրս բերել մարտի դաշտից: Վիրավորվում է նաեւ ինքը եւ տեղափոխվում է Մոսկվա՝ հոսպիտալ:

Ենովք Պողոսյանցի սխրանքը ցանկացած զինվորականի համար ոգեշնչող ուժ էր, իսկ ինստենբուրգյան գիշերային մարտերը՝ հայ եւ ռուս զինվորականության փոխադարձ նվիրվածության վառ արտահայտություն:

Արեւելյան Պրուսիայի մյուս շրջանը, որտեղ իրենց քաջությամբ եւ տոկունությամբ կրկին աչքի ընկան հայ զորայինները, Էյդկունեն քաղաք-կայարանն էր: Մոսկվայի հիվանդանոցներ տեղափոխված հայ վիրավորները պատմում էին, որ Էյդկունենի շրջանում ծավալված մարտերը առավել կատաղի եւ մահաբեր էին, քան պատերազմի սկզբում:

Այստեղ ռուսական մի գումարտակ, որի կազմում էր նաեւ 5 կռիվների մասնակցած ավագ ունտեր-օֆիցեր Լեւոն Գեորգյանը[17], 9 ժամ շարունակ մարտնչեց գերմանական 35-

15 Տե՛ս «Մշակ», թ. 65, 31 մարտի, 1915, էջ 3:

16 Տե՛ս «Մշակ», թ. 257, 13 նոյեմբերի, 1914, էջ 3:

17 Ավագ ունտեր-օֆիցեր Լեւոն Գեորգի Գեորգյանը Վին Նախիջեւանի Ջահուկ գյուղից է, մասնակցել է 5 կռիվների, 6-րդ անգամ օգոստոսի 7-ին Գումբինենի մոտ վիրավորվել է ձախ ոտքից: Ներկայացվել է Ս.Գեորգիի շքանշանի: Բերել էր գերմանական սպայից խլված մի քարտեզ եւ անձնական իրեր: Տե՛ս «Մշակ», թ. 206, 18

րդ, 38-րդ եւ 41-րդ գնդերի դեմ: Օգոստոսի 7-ի առավոտյան ժամը 6-ին, գերմանացիները սկսեցին աշխույժ ռմբակոծություն, որի սկսվելուն պես 3 հոգի խելագարվեցին: Գերմանական հրետակոծությունը ռուսական զորքում հետզհետե ավելացրեց վիրավորների եւ սպանվածների թիվը, իսկ վիրավոր եւ մահացող զինվորների աղեկտուր ձայներից ոգեւորված թշնամին որոշեց հարձակմամբ գրավել կայարանը: 10 հազարի հասնող գերմանական զորքը մի քանի անգամ գերազանցում էր ռուսական զորքին, իսկ գերմանական բազմաթիվ հրանոթների դեմ ռուսներն ունեին ընդամենը 2 գնդացիր: Այսպիսի անհավասարության հետեւանքով ռուսական զինուժը այստեղ կարող էր գլխովին ջախջախվել, սակայն Էյդկունեն կայարանը մեծ ռազմավարական նշանակություն ուներ ռուսական հրամանատարության համար, որի պատճառով ծավալված մարտերը առավել թեժ բնույթ ստացան: Էյդկունենի հարեւանությամբ գտնվող կայարանում տեղակայված ռուսները մի քանի հրանոթ ուղարկեցին Էյդկունեն, իսկ մնացածով 7 վերստ հեռավորությունից սկսեցին ռմբակոծել թշնամու դիրքերը: Հրետանու օգնությունից բացի ռուսներն ունեին մի առավելություն նույնպես. ռուսական սպառազինությունում գտնվող հրացանները կարողանում էին միաժամանակ եւ սվին կրել, եւ կրակել, իսկ գերմանական հրացանները չէին կարող կրակել սվիններով, որի պատճառով թշնամին ուշացումով էր մտնում եւ սվինամարտի, եւ դիմահար հրաձգության մեջ[18]:

Օգնության հասած հրետանու, նշված առավելության եւ ռուսական կողմի ցուցաբերած արիության հետեւանքով գերմանացիները փախուստի դիմեցին: Էյդկունենի համար մղված մարտերի ժամանակ էլ վիրավորվեց ավագ ունտեր-օֆիցեր Գեւորգյանը եւ հոսպիտալացվեց: Այդ մարտերին մասնակցած մի զորայինի պատմածի համաձայն, Գեւորգյանը սվինամարտի ժամանակ ցուցաբերել է առանձնահատուկ ճարպկություն եւ արիություն:

Էյդկունենի համար մղվող մարտերին մասնակցող հայ զորայիններից էր նաեւ հինևախիջեւանցի Բագրատ Կարապետյանցը, որը պատերազմի առաջին օրերից սկսած աչքի էր ընկել քաջությամբ, ինչի համար արժանացել էր Ս. Գեորգիեւյան շքանշանի[19]: Սակայն հայ զորայինի բախտը Էյդկունենում չբերեց, Կարապետյանցը այդ մարտերում վիրավորվեց գլխից եւ ձեռքից եւ ապա ծանր վիճակում տեղափոխվեց Մոսկվայի հիվանդանոցներից մեկը[20]:

Մի շարք մարտական գործողություններից հետո գերմանացիների համար ստեղծված նպաստավոր վիճակը լուրջ վտանգի տակ դրեց Հյուսիսարեւմտյան ճակատի կայունությունը: Իսկ երբ գերմանացիներն իրենց գործողություններով ակնարկեցին իրենց մտադրությունները Հարավարեւմտյան ճակատում ավստրոհունգարական ուժերին օգնելու

սեպտեմբերի, 1914,էջ 2:

18 Տե՛ս «Մշակ», թ. 212, 24 սեպտեմբերի, 1914, էջ 2:

19 Արսեն քահանա Սիմոնյանը 1914թ. նոյեմբերի 13-ի «Մշակում» հանդես է գալիս «Հայ վիրավորները Մոսկվայում» թղթակցությամբ, որտեղ հայ Գեորգիեւյան ասպետների շարքում նշում է նաեւ Բագրատ Կարապետյանցի անունը: Ըստ քահանայի, ինքը մահվան անկողնում է հայորդուն այցելել, քանի որ հիվանդին խնամող գթության եղբայրը տեսնելով, որ հիվանդը հյուծված եւ շատ բարձր ջերմության մեջ գտնվելով հազիվ է շնչում, կարծել է, որ մահանում է: Կարապետյանցը Հյուսիս-արեւմտյան ճակատի մարտերից մեկի ժամանակ գերությունից ազատում է իր հրամանատարին՝ սպանելով 3 գերմանացիների: Այդ սխրանքի համար նա արժանանում է Ս.Գեորգիի շքանշանի:

20 Տե՛ս «Մշակ», թ. 257, 13 նոյեմբերի, 1914, էջ 3:

մասին, ռուսական Գերագույն շտաբն իր պահեստային զորքերից 22-րդ, 3-րդ Սիբիրյան եւ 1-ին Թուրքեստանյան կորպուսները ուղարկեց դեպի Հյուսիսարեւմտյան ճակատ, որտեղ վերջիններս 1-ին եւ 2-րդ ռուսական բանակների միջեւ ձեւավորեցին 10-րդ բանակը:

Արեւելապրուսական ռազմական գործողության ընթացքում Լիկ փոքր քաղաքը նույնպես հանդիսացավ մարտական գործողությունների ասպարեզ: Այստեղ իր զորամիավորումներով գտնվում էր 3-րդ Ֆինլանդական հրաձգային բրիգադը, որը տեղակայված էր Յոհանիսբուրգ-Լիկ-Բյալա բնակավայրերի շրջանում:

Նպատակային ռմբակոծության եւ զորաշարժերի արդյունքում այս շրջանում գերմանացիները հասան որոշակի հաջողությունների. ռուսական զինուժի համար ամենանպաստավոր ելքը նահանջն էր: Գերմանացիները ռուսներից եւ խլեցին Յոհանիսբուրգ քաղաքը, իսկ Լիկ քաղաքի շրջակայքում ծավալված մարտերն ընթացան երկու կողմերի համար էլ զգալի կորուստներով: Լիկ քաղաքից 50 կմ հեռու գտնվող Յոհանիսբուրգ փոքրիկ քաղաքի շրջակայքում տեղակայված էր ռուսական 4-րդ՝ Ֆինլանդական հրաձգային գունդը, որը պետք է եւ վերցներ քաղաքը[21]:

Գունդը մարտկոցի եւ կազակական հարյուրյակի հետ լուսաբացին՝ ժամը 4-ի սահմաններում, սկսեց զորաշարժը Գրաեւո քաղաքից դեպի Յոհանիսբուրգ: 4-րդ Ֆինլանդական հրաձգային գնդի հրամանատարը՝ հայ ժողովրդի զավակ Անդրեյ Նիկոլայի Կոմարովը (Կոմարյանց), ճանաչված էր դեռեւս ռուս-ճապոնական պատերազմի տարիներից, այնուհետեւ հետպատերազմյան շրջանում երկրում ծավալված բազմաթիվ ռազմական քննարկումներում գործուն մասնակցությամբ:

Եթե ներկայացնելու լինենք գնդապետ (հետագայում գեներալ) Կոմարովի անցած ուղին, ապա պետք է նշել, որ նա այդ ուղին անցավ զինվորին արժանավայել պատվով եւ իր երդմանը հավատարիմ: Կոմարովը բարձրագույն սպայական կազմի սպաներից առանձնանում էր նաեւ իր դաստիարակությամբ եւ պահվածքով:

Յոհանիսբուրգ քաղաքի համար մղվող մարտերի ժամանակ ռուսական 4-րդ գնդի դեմ կռվում էր գերմանական 17-րդ գունդը, որը, սակայն, սովորական գունդ չէր, իր ենթակայության տակ ուներ մի շարք միավորումներ, որով գունդը հավասարվում էր բրիգադի կամ դիվիզիայի[22]:

Օգոստոսի 29 (սեպտեմբերի 11)-ի երեկոյան ռուսական զինուժի իրականացրած գրոհը ցույց տվեց, որ քաղաքի գրավման մասին առաջիկայում խոսք լինել անգամ չի կարող, քանի որ թշնամու ուժերը քաղաքում մի քանի անգամ առավել են ռուսների ուժերից: Ընդհակառակը, մտավախություն էր առաջացել, որ գերմանացիների լայնամասշտաբ հարձակման դեպքում ռուսական զինուժը կարող էր զգալի կորուստներ ունենալ: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ ռուսական զորքը աննկատ հեռացավ Յոհանիսբուրգի մատույցներից եւ տեղակայվեց Բյալա քաղաքից 20 կմ հեռու: Երբ գերմանական զորքը անցավ հարձակման, Բյալա քաղաքում տեղակայված ռուսական բրիգադի հրամանատարությունն իր շտաբի հետ միասին փախուստի դիմեց եւ շուրջ 10 հազար զինվորականություն թողնվեց բախտի քմահաճույքին:

---

21 Տես **А. И. Верховский**, На трудном перевале, Москва, 1959, էջ 31:

22 Տես անդ, էջ 36:

Անդրեյ Նիկոլայի Կոմարովի, Ա. Ի. Վերխովսկու նման անձնվեր սպաների շնորհիվ ռուսական զորամիավորումները կարողացան դուրս գալ շրջապատումից: Դա իր հերթին օգնեց ռուսական Գերագույն հրամանատարության հրամանով ճակատային այս հատվածում նոր կազմավորվող ռուսական 10-րդ բանակը:

Օգոստոսի վերջերին սահմանամերձ տարածքներում, Սուվալկի, Վերժբոլով եւ այլ բնակավայրերի շրջաններում ծավալվեցին թեժ մարտեր, որտեղ եւ՛ ռուսական զորքերը, եւ՛ գերմանական զինուժը փոփոխական հաջողությունների հասան: Սուվալկի շրջանում աչքի ընկած զինվորականների թվում էին նաեւ բազմաթիվ հայեր: Հայկազ Սարգսի Փարաջանյանի[23], Կավկազ Սերգեյի Սարգսյանի[24], Արտաշես Մաթեոսի Մնացականյանի[25] եւ այլոց շնորհիվ էր նաեւ, որ ռուսական միավորումները այդ տարածքներում հաջողությունների հասան: Ծավալված գործողություններում հաջողությունների հետ մեկտեղ երկու կողմերն էլ զգալի կորուստներ կրեցին:

1914թ. օգոստոսի 28 (սեպտեմբերի 10)-ին աղետից խուսափելու համար 1-ին ռուսական բանակը սկսեց նահանջել:

Հյուսիսարեւմտյան ճակատի հրամանատարության օգոստոսի 31 (սեպ-տեմբերի 13)-ի հրամանի համաձայն՝ ռուսական 1-ին բանակը պետք է անցներ Միջին Նեմանից այն կողմ, ռուսական 2-րդ բանակը՝ Նարեւից այն կողմ, իսկ 10-րդ բանակը պաշտպանվելով Բոբերի շրջանում, պետք է պահեր Ավգուստով, Գրոդնո շրջանները[26]:

Արեւելապրուսական ռազմական գործողությունը ավարտվեց: Այն, որպես Առաջին համաշխարհային պատերազմի խոշորագույն իրադարձություններից մեկը, պատմագրության մեջ իր տեղը գտավ բազմապիսի գնահատականներով:

Գերմանական պատմագիտական միտքը անսահման ուռճացրեց այս գործողություններում գերմանական 8-րդ բանակի դերը: Տաննենբերգի շրջանում ծավալված ռազմական գործողությունները ներկայացվեցին որպես հաղթանակ՝ «հավասարը որին չէր տեսել ռազմական պատմությունը»[27]:

Իրականում գերմանացիների հաջողությունները ձեռքբերվեցին պատահականությամբ, եւ ինչպես Լյուդենդորֆն էր նշում, եղավ մի պահ, երբ «բավական էր Ռեննենկամպֆը հարձակվեր գերմանացիների վրա, եւ վերջիններս կջախջախվեին»[28]:

Այս ռազմական գործողությունը կարեւոր նշանակություն ունեցավ Ռուսաստանի դաշնակիցների՝ առանձնապես Ֆրանսիայի համար, քանի որ Եւրոպայի Արեւմտյան ճակատից Արեւելյան (Ռուսական) ճակատ տեղափոխվեցին գերմանական 2 կորպուս եւ մեկ

23 Տես ՀԱԱ, ֆ. 151, ց. 1, գ. 73, թ. 7:

24 Կավկազ Սերգեյի Սարգսյանը ծնվել է 1888 թվականի մարտի 27-ին Շուշիում: 1912 թ. հոկտեմբերի 1-ից ծառայության մեջ է: 1914 թ. օգոստոսի 15-ին 212-րդ պահեստային գնդի կազմում ուղարկվել է ճակատ: 1914 թ. սեպտեմբերի 29-ին արեւելյան Պրուսիայում ծավալված մարտերից մեկի ժամանակ գերի է ընկնում: Միայն 1918 թ. նոյեմբերին է նրան հաջողվում գերությունից ազատվել: ՀԱԱ, ֆ. 151, ց. 1, գ. 127, թ. 1-6:

25 Տես ՀԱԱ, ֆ. 151, ց. 1, գ. 137, թ. 1-2:

26 Տես "Восточно-Прусская операция, Сборник документов мировой империалистической войны на русском фронте /1914-1917гг./", Москва, 1939, էջ 428:

27 "Der Weltkrieg 1914 bis 1918. Bd. 2", S IX.

28 Э.Людендорф.Мои воспоминания о войне 1914-1918гг., . 46.

հեծելազորային դիվիզիա, ինչի արդյունքում Մարնայի ճակատամարտում Ռուսաստանի դաշնակիցները հաղթանակ տոնեցին գերմանացիների նկատմամբ:

Արեւելապրուսական ռազմական գործողությունը, որպես Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական եւ խոշոր ռազմական գործողություն, որոշակի նշանակություն ունեցավ նաեւ հայազգի զորականության համար: Որպես ռուսական բազմազգ կայսրության մի մասնիկ՝ հայ ժողովուրդը առաջին անգամ իր բազմադարյան պատմության ողջ ընթացքում մեծաքանակ զինուժով կռվեց թշնամու դեմ ոչ միայն Անդրկովկասում, այլեւ Արեւելյան (Ռուսական) ռազմաճակատում:

Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Արեւելապրուսական ռազմական գործողությանը, համընդհանուր զորակոչային պարտավորություններ կատարելուց բացի, անձնական ունակությունների դրսեւորման եւ քաջագործությունների ապարեզ էր: Այստեղ հայ զինվորականը մարտնչեց արիաբար եւ ինքնանվեր՝ ոչ մի տեղ չզիջելով ռուս զինվորականին իր հայրենասիրությամբ: Հայ զինվորականության համար այս ռազմական գործողությունը դարձավ փորձություն, որից քաղված դասերը հետագայում օգտագործվեցին պատերազմի այլ փուլերում: